

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՎԱՀԱԳՆԻ ԵՎ ԱՍՏՂԻԿԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

*Առասպելա-ծիսական հեքիաթ-վեպ*

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-31 Եղիազարյան

ԳՄԴ 84 (5Հ)-44

Ե 381

# Գրքի հովանավորն է բանաստեղծ Ջոն Թորոսյանը

*Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան*

**Եղիազարյան Վանո**

**Ե 381 Վահագնի և Աստղիկի հարսանիքը: Առասպելա-ծիսական վեպ / Վ. Եղիազարյան. - Եր.: Արմավ, 2017, 108 էջ:**

Այլաբանական ռեալիզմով հագեցած՝ իրապատում, գործողությունների ընթացքով՝ հեքիաթային ու արտասովոր այս վեպը սոսկ առասպելի հերթական մշակում չէ: Գրողը համաժամանակյա գեղարվեստական տարածության մեջ հայ մտախառնվածքի, խաղի ու զվարթախոհության մի պատում է ստեղծել, որը հետաքրքիր է դարձնում ընթերցանությունը թե՛ մանուկների և թե՛ մեծերի համար:

ՀՏԴ 821.19-31 Եղիազարյան

ԳՄԴ 84 (5Հ)-44

**ISBN 978-9939-863-58-0**

© Եղիազարյան Վանո, 2017

© «Արմավ», 2017

## ՎԵՊԻ ԱՆԿԱՂԱՊԱՐ ՀՄԱՅՔԸ

Ժամանակակից հայ գրականությունը զանազան գրական մեթոդներ ու ուղղություններ է ներառում իր կառուցվածքային ընդերքում: Վանո Եղիազարյանը, ով ավելի հայտնի է հայ հին և միջնադարյան գրականության հարցերին իր ուշագրավ քննություններով, հեղինակել է հայերեն առասպելա-ծիսական մեթոդով գրված առաջին վեպը՝ «Վահագնի և Աստղիկի հարսանիքը»: Հեղինակի նպատակն է ներկայացնել գեղարվեստական-ծիսական համաժամանակյա ոգեղեն «ուժերի» ամբողջականությունը: Ծես-արվեստի առաջացման մասին կարելի է խոսել դեռ այն ժամանակներից, երբ մարդիկ պալեոլիթի ժամանակներում առանձին կենդանիներ էին պատկերներում ժայռերին: Ինչպես Գուլյանն է կշում «Նախնական արվեստը զուրկ էր սոցիալական նշանակալի բովանդակությունից»<sup>1</sup>: Սակայն Վանո Եղիազարյանի նպատակը մարդու նախնական վիճակի պատկերում չէր, այլև՝ հոգևոր արժեքների և լավագույն կեցութաբանական մշակույթի նկարագիրը տալը, ինչի պատճառով էլ նա դիմել է առասպելին: Իսկ առասպելը մարդու սոցիալ-հանրային կյանքի պատկերման, հոգևոր ձգտումների հանրագումարն է:

Առասպելը, ի տարբերություն գեղարվեստական գրականության մյուս ժանրերի, ավելի քիչ կապ ունի պարզունակ ծիսական սինկրետիզմի, առավել ևս, պաշտամունքի հետ: «Էպիկական հնաբանությունը ողողված է առասպելներով (հատկապես՝ նախամարդու և դիցաբանական հերոսների մասին առասպելներով), սակայն նրա ծիսական սկզբնաղբյուրները ծայրահեղ խնդրահարույց են, բացառությամբ՝ ռազմական ծիսակարգերի արտացոլումը «Առաջին սխրագործություն» նկարագրության մեջ, ինչպես նաև հարսանեկան և նմանօրինակ այլ փորձությունները»<sup>2</sup>:

Վանո Եղիազարյանը պահպանելով ծիսական ընթացակարգը, իր առասպելն է հյուսում: Վիշապաքաղ Վահագնը և Աստղիկ դիցուհին, ինչպես նաև մի շարք աստվածներ ու առասպելական կերպար-

---

1. Гуляев Н.А. Мифологический реализм, <http://litena.ru/books>.

2. РИТУАЛЬНО-МИФОЛОГИЧЕСКАЯ ШКОЛА В ЛИТЕРАТУРОВЕДЕНИИ, <http://www.e-reading.club>.

ներ, ասենք՝ Երկիրը, Երկինքը և այլն, ի հայտ են գալիս մարդկային բնավորություններով և ներկայացված են իրապատում կերպով, սակայն գրողը դեպքերն ու ժամանակներն խառնում է ինչպես հեքիաթում, և վիպական տարածության մեջ իրար կողքի են հայտնվում տարածամանակյա հայ մշակութային գործիչներ. «Քիչ անց վերին օթյակում Տիրի շուրջն են հավաքվում բանաստեղծները՝ հայոց ազգային ոգին որոնող Խորենացին, Նարեկացին՝ վարդավառի վարդը ձեռքին, սիրուց խնացած Հովհաննեսը՝ տառայպուլը գրկած, աշուղ Քուչակը՝ սազը գրկին, խորամանկ ու ճարպիկ Հովնաթանը, հավերժ սիրահար Սայաթ-Նովան, ծիծաղն երեսին Պարոնյանը, Րաֆֆին՝ գլուխը մարմնից անհամեմատ մեծ, նաև իմաստուն աշուղ Զիվանին, քնքուշ Երամը, մեղմաթախիժ Հավասին, խոհուն Եսահենը, Լրբազեղ Աշոտը և այլ աշուղներ: Բանաստեղծների սեղանին պատվավոր բազմում են նաև Մեծ լոռեցի Հովհաննեսը, կնամեծար Ավոն, թախձալի դեմքով Վահանը, գոզալների տեսքով հարբած Չարենցը, կարոտ հայացքով Մահարին՝ այս անգամ օտարազգի Չալոյի հետ, Սևակը, ով թիկնել է մի մեծ ափի՝ իբրև բազկաթոռի մեջ, սիրառատ Ծիրազը՝ յոթ որդիներով, ոսկեբերան Համոն, չխոսկան պերճախոս Հրանտը, հրաշյա երիտասարդ պոետներ և շատերը, որոնց այնքան էլ լավ չեմ ձանաչում: Բանաստեղծների օթյակում ձեմում են Մեսրոպ Մաշտոցն ու Կոմիտասը՝ հայոց գրի ու հայկական երաժշտության ակունքների մասին գրուցելով»:

Վանո Եղիազարյանը հարսանեկան ծեսում օգտագործում է ժողովրդական խաղերն ու երգերը: Անշուշտ, այս ստեղծագործությունն այլաբանական ռեալիզմ է, որն այս արտասովոր վեպին անկաղապար հմայք է տալիս: Առասպելն ու առասպելական կերպարները զուտ ֆոնի դեր են կատարում, որոնց միջոցով հեղինակը նպատակ ունի ներկայացնել հայոց հարսանեկան ծեսը՝ իր բոլոր Լրբերանգներով. խաղ-զվարթախոհություն, երգ ու պար, հեքիաթային մոզակա-նություն և մշակույթ, որոնք այս օրերին կամաց-կամաց ոչնչանում են հայ իրականության միջից: Վեպը դառնում է ծեսի պատմություն, որտեղ հերոսները կարող են լինել ամենքը...

**Արմեն Ավանեսյան**

## ԲԵՐԱՆԲԱՑԵՔ

Մտածում եմ՝ ինչո՞ւ հայոց առասպելաբանությունը ոչ միայն հայր չգիտի, էլ ուր մնաց՝ օտարը, բայց հունական դիցաբանությունը գիտեն բոլորը, նաև՝ հայր: Մենք «Ողիսական» չունենք, երևի դա է պատճառը, մեր ողիսականն ուրիշ է եղել:

Ուստի պիտի գրեմ մի բան, որ ոչ ոք չի գրել, բայց մեկը հարյուր տարի առաջ ցանկացել է գրել: Պիտի մեր օրերի հետ շաղախված հեքիաթի պես պատմեմ հայոց առասպելաբանությունը, որ գիտականացրել է Սաքո առասպելական պապը, բայց այն նույնիսկ շատ մասնագետներ չեն կարդում, եթե կարդում էլ են՝ մեծ մասը մեծ մասը նույնիսկ չի հասկանում: Ես պիտի գրեմ մի գործ, որ ոչ ոք չի գրել, բայց մեկը ցանկացել է գրել, թեև չգիտեմ՝ ինչ ձևով: Ու այդ մեկը ո՛չ ավել, ո՛չ պակաս Մեծ Լոռեցին է եղել, ինչպես հիշում է բանաստեղծի դուստր Լվարդը: Հիմա նրա չարածն ուզում եմ անել լոռեցու պատվարժանությամբ, ինչ կլինի՝ կլինի:

Այսպես բացվեց քառասուն տարվա փակ բերանս՝ վիշապի փակած ջրի ձամփի պես: Վիշապաքաղ Վահագնը սպանեց բերանակալ վիշապին, ու այդպես ծնվեց «Վահագնի և Աստղիկի հարսանիքը» առասպելական հեքիաթը:

Հեքիաթս ծոր տվեց, դարձավ վիպակ, թե **առասպելածիսական հեքիաթ-վեպ**, հիմա արդեն էական չէ ինձ համար: Եականը մի բան է, որ ամեն մի հայ այստեղ կգտի իրեն, իր հորն ու պապին, իր նախնիների արյան կանչը, հայոց ավանդություններն ու բնաշխարհը, հայ մարդկանց առած-ասացվածքների իմաստությունը, անեծքն ու մաղթանքը, օրհնանքն ու բամբասանքը, կիրքն ու սերը: Հեքիաթային ու առասպելական են Երկնքի և Երկրի ամուսնությունից ծնված Վահագնի սխրանքները, վարդավառն ու հարսանեկան ծեսն իրենց ավանդական մանրամասնությամբ և հավատալիքներով: Հարսանիքին ներկա են դիցաստվածներն ու մեր նախահայրերը, մեծանուն բանաստեղծները և թագավորները, գիտնականներն ու էպոսի ծոերը, կենդանիները և անանուն

մեծահարուստները, ու այս բոլորն ապրում են տիեզերական նույն ժամանակի մեջ:

Հայոց առասպելական ողջ մտածողությունը մեկտեղվել է՝ Վահագնի ծնունդից մինչև Աստղիկի առագաստը: Վահագնի և Աստղիկի սիրով լցվել է տիեզերքը, նուրը ծաք է տվել նրանց սիրուց, լավաշի այտին մնացել է կրակի համբույրի հետքը, խնձորը սիրուց կարմրել է: Տիեզերքը լցվել է ամենայն սիրով ու գեղեցկությամբ:

Այդ ամենը տեսնել է պետք, սիրո աչքերով տեսնել: Տեսնել ու գրել, որ սիրո աչքերը չկուրանան, որ բերանակալ ինըգլխանի վիշապն այլևս գլուխ չբարձրացնի ու փակի անմահական ջրի ծանապարհը:

## ԵՐԿՆՔԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆ ՈՒ ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Ժուկով ժամանակով մայր երկիրը տոչորվում էր սիրո կարոտից. նա աչքը հառել էր հայր երկնքին և կրքից այրվելով երկնային ծիրանի ծովից ցայտող անձրև էր տեսնում:

Հայր երկինքը բարձրահասակ մի տղամարդ է՝ յոթհարկանի մի հսկա, որի ոտքերը երկրի մակերևույթին են, ապա դեպի վեր ձգվում են ամպերը, լուսինը, արեգակը, աստղերը, հրեշտակների և սրբերի կայանը, իսկ ամենավերևում՝ լուսեղեն Աստծու աթոռն է:

Մայր երկիրն էլ բարետես ու նրբիրան մի գեղեցկուհի է՝ նույնպես յոթալաթանի, սակայն, հակառակ երկնքի, դեպի վար են իջնում Գետինքը, Դժոխքը, Սանդարամետքը, Տարտարոսը, Գեհենը, Անդունդքը, Յանատակը:

Հայր երկինքը պարզ է ու շիտակ՝ Սասնա ծռերի պես, մայր երկիրը՝ խավար ու մթին՝ խորհրդավոր կնոջ պես:

Կանացի կրքից այրվող երկիրը ձաք է տալիս սիրո ծարավից, պարզում է իր ձեռքերը դեպի երկինք՝ փորձելով գրկել նրան:

- Պնդացրո՛ւ քո մեջքը տղամարդու նման, երկի՛նք,- գոչում է երկիրը:

Սակայն ամպերը չար վիշապների պես փակում են երկնքի լույս երեսը: Սկսվում է երկնային մի ահեղ մարտ՝ հանուն սիրո և պտղավորման: Երկիրը կանացի բոլոր հրապուրանքներով իր գիրկն է կանչում երկնքին: Առնական երկինքը չի դիմանում գայթակղությանը, բոցկլտում են նրա հրացայտ աչքերը, որոտում է կրքից, դողդում: Երկինքն ու երկիրը գրկախառնվում են, սեղմվում իրար, ձայթում է ամպրոպը, բոցավառ կրքից կայծակը շանթ է արձակում, ցայտում է երկնային անձրևը, և տիեզերքը լցվում է Սիրով:

Երկնքի և երկրի սրբազան հարսանիքին՝ որպես հարսանեկան ուսպանգ, կանաչ-կարմիր է կապում ծիածանը: Երկիրը զուգվում է հազարանուն ու բազմաերանգ ծաղիկներով:

Երկնքի և երկրի ամուսնությունից տիեզերքը բռնվում է երկունքի ցավով: Տիեզերական երկունքի ցավից որոտում է ամպրոպը: Ամպրոպի ժամանակ ծովերից ու լեռներից երկինք են ելնում ամպ-վիշապները, որոնք փակում են Արեգակի լույս երեսը:

- Անմահ վիշապը եթե հազար տարեկան դառնա, կարող է կուլ տալ Աշխարհը,- զգուշացնում է երկնային Ամենատեսը:

Դրա համար հրեշտակները իջնում են երկնքից, բռնում, կապկպում Վիշապին: Վիշապը գալարվում է՝ բերանից հուր ու ջուր թափելով երկրի վրա: Վիշապի մարմինը հրեղեն է՝ ինչպես ամպրոպի հուրը: Հրեշտակները կայծակե գավազանով ծեծում են Վիշապին. ծեծվող Վիշապը որոտալով գոռգոռում է:

Երկունքի պահին ծիրանի ծովում բռնկվում է կարմիր եղեգնը, որի ծխից ու բոցից ելնում է հրեղեն մագերով, բոցավառ մորուքով և արեգնաձև աչքերով Վահագնը:

Ծնվելուն պես Վահագնը վազում է քաղել-քաշելու Վիշապին:

- Հասի՛ր, Վիշապաքաղ ի՛ն Վահագն,- լսվում է հոր փրկության կանչող ձայնը:

- Ձենք ու զրահդ կապիր,- խորհուրդ է տալիս մայրը:

- Չորությունդ ինձնով կզորանա,- հուսադրում է երկնային ծիրանի ծովը:

Երկնային ծովից դուրս եկած հրեղեն աչքերով Ծովյանը, կայծակը հեծած, օգնության է հասնում Վահագնին: Ծովյանը, հրեղեն մի ձի նստած, խաղում, պարում է ամպերում: Նրա և իր Քուռկիկ Ջալալու աչքերից կրակ է ցայտում. անհնար է նայել նրա հրացայտ դեմքին: Ամպրոպային մութ գիշերին Ծովյանը փայլատակում է.

- Ծովյանը խաղում է,- հաճույքից հրձվում ու ակամա գոչում է երկիրը:

Ապա հորդում է անձրևը, և իր խոնավությամբ հայր Երկինքը նորեն պտղավորում է մայր Երկրին:

Այդ պահին հրացայտ աչքերով Ծովյանը հրեղեն ձին, զենք ու զրա-



---

Վահագնի և Աստղիկի հարսանիքը  
հը հանձնում է Վահագնին, ապա վազելով անցնում ծիածանի տակով՝  
դառնալով Ծովինար անունով մի գեղեցկուհի:

- Գնա՛, որդիս և բացի՛ր ջրի ձանապարհը, սպանի՛ր չար Վիշապին,-  
ասում է մայր Երկիրը:

- Քա՛ջ Վահագն, եթե հաղթես Վիշապին, քեզ կնության կտամ իմ գե-  
ղանի դուստր Աստղիկին,- խոստանում է ոսկեմայր Մեծ Տիկին Անահի-  
տը:

- Հասի՛ր փրկության,- հայր Երկնքի դղրդյունին միանում է դիցահայր  
Արամազդի հուժկու ձայնը,- քեզ կարգում են քաջության, պատերազմի  
ու հաղթանակի, ամպրոպի ու կայծակի վիշապամարտիկ դից:

## ՎԱՀԱԳՆԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խարտյաշ պատանյակ Վահագնը, բոց ու ծուխ շաղ տալով, սլանում  
է տասներկու գավազանակիրների ուղեկցությամբ: Սիրահար վիշապա-  
մարտիկը ցատկելով քայլում է Մասիս ու Արագած լեռների վրայով, ապա  
Անահիտի խորհրդով մի ոտքը Վարագ, մյուսը Սիփան լեռանը հենած՝  
որոնում է Աստղիկին Վանա ծովի ձերմակաթույր փրփուրների մեջ: Վա-  
նա ծովը՝ ասես լայնափեշ մի գեղեցկուհի, դեմքով նայում է դեպի  
արևելք, սփռված Հայկական լեռնաշխարհում՝ Տուրուբերան և Վասպու-  
րական նահանգներում, գլուխը հենած Հայկական պար լեռնաշղթային,  
իսկ փեշերը Հայկական Տավրոսի ոտքերին փաթաթած: Ծուրջը Կորդ-  
վաց ու Ծաղկանց լեռներն են և Կոտուրի լեռնաշղթան: Գեղեցկուհու ան-  
դորրն ասես այսօր էլ հսկում են Սիփանն ու Նեմրուծը, ավելի հեռվից Ար-  
տոսն ու Վարագա լեռը՝ աջքները հառած հյուսիսում Լիմի Սուրբ Գևորգ  
եկեղեցու ավերակ-փլատակներին, արևելքում Կոտուց անապատի Գրի-  
գոր Լուսավորչի հիմնած վանական համալիրին, հարավ-արևելքում՝ Ար-  
տերի զանգակատանը և Աղթամարի արվեստավոր Սուրբ Խաչին: Ծովի

շուրը ասես սիրածին անհույս սպասող գեղեցկուհու աղի արտասուք լինի: Հարևան Նազիկ լճից այստեղ եկած ջրագուպները փորձում են թալանել աղի արտասուքի մեջ լողացող ձկներին՝ փոքրիկ տառեխներին, որոնց պարզ ու թափանցիկ ջրի մեջ հնարավոր է նույնիսկ հաշվել: Այստեղ՝ Վանա ծովի փրփուրների մեջ, Վահագնը գտնում է Աստղիկի վարդաբույր ոտնահետքը՝ նկատելով, որ քայլերի տեղում ոտքերից կաթլթող արյունից վարդեր են բուսնել:

- Աստղիկը վարդի թերթեր է թափում, և աղջիկները դրանից աստվածային գեղեցկություն են ստանում,- հուշում է նրան Անահիտը:

Վահագնը ինքնամոռաց որոնում է նրա անցած արահետը, ուր որ է հասնում նրան, սակայն հայտնվում է մթին մի աշխարհում, որտեղ ոչինչ տեսանելի չէ:

- Սպասե՛ք այստեղ,- հրամայում է Վահագնը տասներկու գավազանակիրներին՝ Տավրոսյան լեռների վրայով շտապելով դեպի Ասորեստանի կողմերը:

Քիչ անց, հարդի մի խուրձ շալակին՝ Վահագնը կրկին հայտնվում է Տավրոսյան բարձրաբերձ լեռների վրա: Վահագնը նայում է շուրջը. այստեղ լեռներ են լեռների վրա, անդնդախոր կիրձեր են ձորերի մեջ: Ասես լեռը լեռան շալակն է ելել, որ առաջինն ինքը տեսնի Վահագնի որոնածը:

Ապա շրջվում է ու տեսնում, որ Բարշամից գողացած հարդը թափվել է ձանապարհին՝ գիշերվա երկնքում թողնելով սպիտակ հետք՝ որպես հարսի կրծքի կաթ, որ ցայտել է երկնքի երեսին և մնացել իբրև Ծիր Կաթին կամ Հարդագողի ձանապարհ:

- Վառեք այս դարմանը, որ գտնենք Աստղիկի ոտնահետքը:

- Կրակ չկա:

- Կա՛,- որոտում է Արամազդը,- Վանա ծովի մեջ մի ժայռ կա, որի վրա թխպամած եղանակին լույս է ընկնում: Այդ լույսից է ծնվել իմ որդի արարչագործ Միհրը. նրա ձախ ձեռքին մի ջահ կա, որով լուսավորում է աշխարհը, նրա մոտ է կրակը:

- Երկնային լույսի, մաքրության և արեգակի դիցն է Միհրը, որի լույ-

---

Վահագնի և Աստղիկի հարսանիքը սը նրա հուր կրակի հագուստն է, իսկ սիրավառ սիրտը Աստվածային կայծի կացարանը,- Արամազդի խոսքը շարունակում է Վահագնը:

Քիչ անց գավազանակիրները Միհրից բերած կայծով վառում են գողացված հարդը Հայկական Տավրոսի Հավատամք լեռնագագաթին՝ հավատալով, որ կգտնեն Աստղիկ դիցուհու վարդե ոտնահետքը:

Իսկ հեռվում, ուր Արածանին մտնում է Մշո դաշտ, Կնձան սարերի մեջ քարերին է զարկվում և գուռ գուռ ձայն հանում: Հենց այդտեղ՝ Ողական ամրոցի մոտ՝ Գուռգուռա կիրձում, Աստղիկի լողարանն է, ուր նկատում են լուսաձերմակ մի չքնաղ մերկ մարմին, որ կանացի հեշտանք ու կիրք է լցնում Արածանիի ջրերի մեջ: Քարե լողարան կիրձը լցվում է վարդի թերթերով ու գեղեցկությամբ: Այդ պահին գավազանակիր պատանիների և Վահագնի հրացայտ աչքերի լույսը խավարում է կանացի լուսեղեն մարմնի ձերմակ գեղեցկությունից: Գիշերվա խավարը թագավորում է շուրջը:

Միակ հույսը առավոտյան Միհրի զորությամբ Արեգակի շողերի ձաձանչումով արթնացող Աստվածային լույսն էր:

Առավոտյան աքլորականչին, երբ խավարը նահանջում է, պատանիները հասկանում են, որ Տարոնի դաշտը պատված է թանձր մշուշով. ոչ մեկը չի արժանանում Աստղիկի չքնաղ մերկությունը տեսնելու բաղձանքին:

- Սա Տարոն չէ, մուշ ու մշուշ է,- գոռում է բարկացած Վահագնը,- այսօրվանից դաշտն այս պիտի կոչվի Մշո դաշտ:

Մշո դաշտի Քարքե լեռան լանջերից լսվում է Անահիտ դիցուհու ձայնը. - Քա՛ջ Վահագն, մի՛ վիատվիր, իմ գեղանի դստերն առնելու համար դու պիտի հաղթահարես բազում փորձություններ, որ արժանի լինես նրա սիրուն:

- Ես պատրաստ եմ անգամ Դժոխք հասնել հանուն սիրո,- ինքնամոռաց գոչում է սիրահար պատանին:

- Ես զորավիգ կլինեմ քեզ, սիրահա՛ր պատանի,- ասում է Ռազմի ոգին Անահիտ դիցուհու շուրթերով:

Այդ պահին հանկարծ ցրվում է մշուշը: Մշուշն աստիճանաբար նահանջում է՝ տեղ-տեղ թողնելով ամպի քուլաներ, որոնք հետզհետե ցրվում են՝ քաշվելով շրջակա լեռները: Հայկական Տավրոսի բարձունքից Վահագնի աչքի առաջ բացվում է Տարոնի չքնաղ դաշտը՝ մի հսկայական հարթակ, որը սփռվում է Արածանիի միջին հոսանքում՝ նրա ձախակողմյան վտակի՝ Մեղրագետի շուրջը՝ հասնելով արևելքում մինչև Գրգուռ և Նեմրութ լեռներին, հյուսիս արևմուտքում՝ Մերգեմեր լեռնաշղթային, իսկ հյուսիս արևելքում՝ Կոփի լեռներին: Ոսկեծուփ ցորենի արտերը Տարոնի դաշտը լցնում են խարտյաշ երանգներով՝ դաշտը վերածելով ոսկեզօծ շտեմարանի: Տեղ-տեղ փայլվում են խաղողի ոսկե ողկույզները: Սեխի, վարունգի և ձմերուկի դաշտերը ձգվում են գետեզրերին: Պտղատու այգիների ոսկեհաս պտուղների փայլը համաձույլ է ցորենի, սեխի, խաղողի ոսկեգույնին, և ասես Տարոնի դաշտը ոսկով լի մի գանձարան լինի: Իսկ դաշտը երիզող լեռնալանջերին սփռված անտառներում՝ տերևների վրա նստում է երկնային մանանան՝ քաղցրահամ գազալեն: Այս համընդհանուր ոսկեգույն տեսարանի ֆոնին հանկարծ Աստղիկ դիցուհու լողարանի դիմաց հայտնվում է ոսկեբաշ մի առյուծ:

Վահագնը նետահարում է առյուծին, սակայն արձակած նետերը դիպչում են առյուծին ու ետ թռչում դեպի գավազանակիրները, ովքեր փորձում են բռնել ոսկեշող նետերը: Կատաղած առյուծը նկատում է Վահագնին և վիթխարի թրերը ձեռքին՝ հարձակվում նրա վրա: Սկսվում է մի դաժան մենամարտ՝ հանուն կյանքի և սիրո: Ահեղագոչ առյուծը շանթախար ցատկում է Վահագնի ուղղությամբ, սակայն Վահագնը իր զորեղ բազուկներով բռնում է առյուծի երախը, մի ձեռը գցում վերին ծնոտին, մյուսը՝ ներքևի, ձևում առյուծին՝ մեջտեղից երկուկես անելով և նրա դեղձան մորթին գցելով իր ուսերին: Երկպատառ առյուծի մի կեսը նետում է Բարձր Հայքի Եկեղյաց գավառի մի լեռան, մյուսը՝ Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի մեկ այլ լեռան վրա, որի համար այդ երկու լեռներն անվանվում են Առյուծ:

- Առաջին փորձությունը հաղթահարեցիր, այսուհետ քո տասներկու

գավազանակիրներին անվանակոչի՛ր անուններով. այս մեկին կոչի՛ր **Առյուծ**, - ուրախությամբ բացականչում է Անահիտը, - իսկ այժմ պիտի կուզես Վիշապի դեմ, ով փակել է ջրի ծանապարհը:

Տավրոսյան լեռների Հավատամք լեռնագագաթից, ուր գիշերը կրակ էին արել գավազանակիրները, դեպի Բինգյուլ-Մնծուրյան լեռների կողմը, Մուշ քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք, չհասած Օձ քաղաքին, վեր է սլանում Քարքե առասպելական լեռը, որի ստորոտում նիրհում է Աշտիշատ քաղաքը: Ամեն օր ծարաված քաղաքից մի գեղանի կույս են տանում Քարքե լեռան վրա գտնվող Իննակյա աղբյուրի ակունքին նստած Վիշապին, որ բացի ջրի ծանապարհը:

Իննակյա աղբյուրի ծահիճներում է քնում ինըգլխանի Վիշապը: Իննակնանի աղբյուրի ամեն ակից դուրս է ցցվում Վիշապի մի գլուխը՝ փակելով ջրի ծանապարհը:

Վահագնը կայծակնացայտ շիկացած նետերով հարվածում է Վիշապին. կտրված ամեն մի գլխի փոխարեն երկուսն է դուրս գալիս:

- Իմ վիշապաքա՛ղ Վահագն, խփի՛ր անմահ գլխին, որ մեջտեղի ակունքում է, - խրատում է խոհեմության և իմաստության մայր Անահիտը:

Վահագնը նետահարում է ուղիղ Իննակյա ակունքի մեջտեղում ցցված գլխին: Վիշապը գալարվում է, Քարքե լեռան բարձունքից գլորվում և ընկնում Տիրակատար քաղաք, որի համար քաղաքն անվանվում է նաև Վիշապաքաղաք կամ Օձ, իսկ սատկած Վիշապի մարմինը Վահագնը նետում է դեպի Հայկական պար լեռնաշղթա, որն ընկնում է Ջրաբաշխ լեռնազանգվածում Կաղզվանի լեռան վրա, և լեռն այդ անվանվում է Վիշապածոր:

- Առա՛ջ եկ, **Կարիճ**, և իմ նետերը թաթախի՛ր Վիշապի թոյնի մեջ, - ասում է Վահագնը մյուս գավազանակրին:

Վահագնի՝ Վիշապի թոյնի մեջ թաթախված նետերն այդ պահից դառնում են թունավոր, անբուժելի ցավեր ու մահացու վերքեր պատձառող:

Հենց որ Վահագնը շրջվում է, տեսնում է, որ պղնձե ծանկերով և

բրոնզե փետուրներով թռչունները հարձակվում են Աշտիշատ քաղաքի բնակիչների վրա: Քարքե լեռան բարձունքից Վահագնը սկսում է նետահարել այդ թռչուններին:

- **Աղեղնավոր**, օգնիր ինձ, արձակիր քո թունավոր նետերը,- գոչում է Վահագնը:

Վահագնի և Աղեղնավորի արձակած թունավոր նետերից սաստկում են թռչունները, իսկ ողջ մնացածները ցրվում են ու այլևս չեն վերադառնում:

Ապա կենդանիների հովանավոր Լուսինը, տեսնելով սաստկած թռչուններին, որոշում է վրեժխնդիր լինել և ոսկե եղջյուրներով ու պղնձե ոտքերով եղջերուին ուղարկում է, որ գա պատժի մարդկանց: Վազում է նրա ուղարկած այծյամը Հայկական լեռնաշխարհի Այծատկունք լեռնաշղթայում՝ առանց կանգնելու և հոգնելու, անցնելով սար ու ձոր, գետ ու հովիտ: Համառորեն հետապնդելով՝ Վահագնը հասնում է նրան և Ծաղկանց լեռներում նետահարում. նետը խրվում է ոտքի մեջ, սակայն վիրավոր այծյամը շարունակում է փախչել: Վահագնը հրամայում է իր մյուս գավազանակրին.

- Բռնիր դրան և բեր Աշտիշատ, ու քո անունը **Այծեղջյուր** կլինի:

Այծեղջյուր գավազանակիրը հասնում է վիրավոր եղնիկին Գայլատու լճի մոտ՝ եղջերասարում, բռնում արդեն դեպի հարավ՝ Բերկրի ջրվեժի ուղղությամբ փախչող վիրավոր եղնիկին ու բերում Աշտիշատ:

Իսկ Վահագնը, փախչող եղջերուի հետևից Ծաղկանց լեռների վրայով վազելով, հասնում է մինչև Բագրեվանդ գավառ, ուր այցելում է Բագավան՝ իր ընկերոջ՝ Վանատուրի օթյակը: Պանդուխտների, օտար ճամփորդների հովանավոր, նրանց ապաստան տվող հյուրընկալության դից Վանատուրը գինի է հյուրասիրում նրան և նստում են քեֆի: Նպատ լեռան վրա ապրող վարազը բորբոքում է հուշապարիկներին: Իսկ լեռնային ու անտառային այդ դևերը, առնելով իրենց պատկանող գինու հոտը, զայրացած գրոհում են Վահագնի ու Վանատուրի վրա: Անվախ Վահագնը հարձակվում է հուշապարիկների վրա: Մինչև երանքը ձիու

---

Վահագնի և Ասողիկի հարսանիքը մարմնով ու ոտքերով, իսկ գոտկատեղից վերև մարդկային կերպարանքով այս գինեմուլ հրեշներին նետահարում են Վահագնը և իր գավազանակիր մի ընկերը՝ խոյանալով հուշապարիկների դեմ:

- **Խոյ**, հարվածի՜ր թունավոր քո նետերով այս գարշելի հրեշներին, - գոռում է Վահագնը:

Հուշապարիկները, լսելով Վահագնի ձայնը, անդունդների վրայով ցատկելով, փախչում են դեպի Փայտակարանի Սպանդարանպերոժ գավառ, որ շղարշն է Սանդարամետի:

Նրանք խնդրում են Վահագնի ընկեր Սպանդարամետի աջակցությունը: Սակայն Խոյը շարունակում է նետահարել նրանց և անզգուշությամբ խոցում է Սպանդարամետին: Սպանդարամետը պիտի տանջահար ընկներ Դժոխք, սակայն դրա փոխարեն իջնում է Ստորգետնյա թագավորություն՝ այնտեղից իշխելու մահվան վրա: Խոցված ընկերոջը տեսնելով՝ վշտացած Վահագնը վազում է վարազի ետևից, գոչյուններով դուրս է քշում անտառից՝ փախցնելով դեպի Մասիս լեռան ձյունները, որտեղ էլ բռնում է վարազին և բերում Աշտիշատ:

Արևորդի թագավորի ձյունաձերմակ ոտքերով 500 ծիրանի ցուլերը արածում են Բինգյոլի լանջերին, իսկ ցուլերի գոմաղբը գլխեգլուխ լցվել է ախոռներում: Տեսնելով Արևորդու գոմի լցված ախոռները՝ Վահագնը խոստանում է.

- Ես կմաքրեմ այդ ախոռները մեկ օրում, եթե քո ցուլերից 50 հատ դրա դիմաց ինձ տաս:

Թագավորը, մտածելով, որ Վահագնը չի կարող իր խոստումը կատարել, համաձայնում է պայմանին:

Այդ պահին խոհեմության մայր Անահիտը խորհուրդ է տալիս. - Քանզի՜ր գոմի պատերը, Վահագն:

Վահագնը տասնմեկ գավազանակիրների հետ քանդում է պատերը, իսկ մի գավազանակրին հանձնարարում.

- Գնա՛, **Ջրհո՛ւ**, Մեղրագետ և Արածանի գետերը միավորի, և այդ ջրերը միացյալ բե՛ր, լցրո՛ւ այս գոմի մեջ:

Ջրերի հոսքը սրբում, տանում է Արևորդու ախոռների գոմաղբը, իսկ Վահագնը իր գավազանակիրների հետ արագ պատում է քանդած գոմի պատերը: Հարմացած Արևորդին, երեկոյան կողմ տեսնելով մաքրված ախոռները, թաքնվում է գիշերվա խավարի մեջ, որ չկատարի իր խոստումը: Վրեժխնդիր Վահագնը սպանում է ուխտադրուժ թագավորին՝ տիրանալով նրա ողջ ունեցվածքին:

Արևորդու նախրի մեջ արածում էր մի ամեհի ցուլ, որին նա պիտի զոհաբերեր հանուն Ծովինարի: Սակայն հիանալով այդ ցուլի գեղեցկությամբ՝ թագավորը նրան պահում է իր նախրի մեջ՝ նրա փոխարեն զոհաբերելով մի ուրիշ ցուլի: Ցուլն այդ բարկանում է, իր եղջյուրները դեմ է անում Այրարատ աշխարհի Յլուզլուխ լեռանը և թափահարում, որից երկրաշարժ է առաջանում: Վահագնը բռնում է այդ ցուլին, նստում նրա մեջքին, քշում անցնում Վանա ծովի ջրերի վրայով՝ զսպելով ցուլի կատաղությունը և բաց թողնելով նրան: Իսկ ցուլն այդ, նորեն կատաղելով, սուրում է դեպի Արևելքի կողմերը:

- **Ցուլ** եմ անվանում քեզ ու կարգում եմ որպես սաստող ամեհի ուժի, որ չթողնես այդ կատաղած ցուլը կործանի Երկիրը,- ասում է Վահագնը իր մյուս գավազանակրին:

Իսկ ինքը ուղևորվում է Կապադովկիա, որի արքան ուներ հրաշք գեղեցկությամբ և զորավոր ուժի տեր զույգ ձիեր, որոնցից մեկը ձերմակ էր, մյուսը՝ թուխ: Արքան չէր կարողանում սանձել նժույգներին, և նրանց երկաթե գամերով կապել էր տվել երկգագաթ լեռնագագաթներից: Լեռն այդ ջրազուրկ էր, և կեր չկար, ուստի ձիերին կերակրում էին օտարականների մսով: Վահագնը տիրանում է այդ նժույգներին, և Մշակ անունով մեկին կարգում նժույգների պահապան: Մշակը այգաբացից մինչև մթնշաղ հսկում է ձիերին: Մինչ Վահագնը շրջում է Կապադովկիայում, սաստիկ քամի ու անձրև է սկսվում, խրխնջում են ամեհի նժույգները, պոկում են գամերը և ուտում Մշակին:

- **Երկվորյակ** իմ գավազանակիր, բռնիր ու սանձիր այդ նժույգներին,- բարկացած գոչում է Վահագնը, իսկ մյուս գավազանակիրներին



## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՎԱՀԱԳՆԻ ԵՎ ԱՍՏԴԻԿԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՎԵՊԻ ԱՆԿԱԴԱՊԱՐ ՀՄԱՅՔԸ (Արմեն Ավանեսյան) .....	3
<b>ԲԵՐԱՆԲԱՅԵՔ</b> .....	<b>5</b>
ԵՐԿՆՔԻ ԵՎ ԵՐԿՐԻ	
ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՈՒ ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ .....	7
ՎԱՀԱԳՆԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	9
ՆՈՅԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՎԱՐԴԱՎԱՌԻՆ .....	24
ՍԿՍՎՈՒՄ Ե ՎԱՐԴԱՎԱՌԸ .....	30
ԱՂՋԿԱՏԵՍ ԵՎ ՓԵՍԱՏԵՍ .....	47
ՈՒԶԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	51
ՆՇԱՆԱԴՐԵՔ .....	54
ԽԱԼԱՆԿՏՈՒՐ .....	58
ՀԱՐՍԱՆԻՔԻ ՄԵԿՆԱՐԿ՝ ՏԱՇՏԱԴՐՈՆՔ .....	60
ԵԶ ՄՈՐԹԵԼՈՒ ՕՐ .....	64
ՀԱՐՄԱՌ .....	73
ՀԱՐՍԻ ՄՈՒՏՔԸ ՓԵՍԱՅԻ ՏՈՒՆ .....	76
ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ .....	80
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽՆՋՈՒՅՔ .....	81
ԱՌԱԳԱՍՏ .....	103

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ  
ՎԱՀԱԳՆԻ ԵՎ ԱՍՏԴԻԿԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

*Առասպելա-ծիսական վեպ*

ВАНО ЕГИАЗАРЯН  
СВАДЬБА ВААГНА И АСТГИКА

*Мифическо-ритуальный роман*

*Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան  
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի*

*Չափսը՝ 60x84 1/16  
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ<sup>2</sup> 1.5 ծ.կ.  
Ծավալը՝ 6.75 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 300  
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran  
Գինը պայմանագրային*



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Ширазы 24 д. 48 кв.  
тел.՝ +374-10-34-73-35  
Email: armav-hrat@mail.ru



«Մագաղաթ» տպագրատուն, Մանանդյան 33  
Հեռ.՝ (+374 91) 46 09 72  
(+374 93) 20 71 86

Էլ-փոստ՝ magaghatprint@gmail.com